

***Ոռոգման կազմակերպությունների Կառուցվածքային Ամրապնդում Ենթաբաղադրիչը  
Ջրից դեպի շուկա բաղադրիչի մասն է կազմում***

**Նպատակ**

Օգնել ֆերմերներին ձեռք բերել համապատասխան գիտելիքներ, վստահություն և սեփականության զգացում, որը հնարավորություն կտա նրանց ընդունել ոռոգման համակարգի կառավարման պատասխանատվությունը և ապահովել շահագործման ու պահպանման ֆինանսական կայունությունը

Այս ենթաբաղադրիչը հիմնված կլինի ընթացիկ կազմակերպական բարեփոխումների (2001թ-ից ի վեր) վրա, նպատակ ունենալով, ուսուցման և տեխնիկական աջակցության միջամտություններով, զարգացնել ոռոգման կառավարման կազմակերպությունների կառուցվածքային և տեխնիկական կարողությունները, որպեսզի ա) ապահովվի վստահելի և ժամանակին ջրամատակարարումը, բ) խրախուսվի ջրօգտագործողների սեփականության զգացումը ջրամատակարարման համակարգի նկատմամբ, գ) ստեղծվեն նախապայմաններ ոռոգման համակարգի տեխնիկական և ֆինանսական կայունության համար:

Գործունեության ոլորտները.

1. Ջրօգտագործողների ընկերությունների կարողությունների ամրապնդում՝ ուսուցում և տեխնիկական աջակցություն կազմակերպական և կառավարման հիմնախնդիրների առավել արդյունավետ լուծման համար:
2. Ոռոգում-Ջրառի և ՋՕԸ-ի պատասխանատվությունների բաշխում, ինչպես նաև Ոռոգում –Ջրառի կարողությունների ամրապնդում, որպես ոռոգման ենթակառուցվածքի ղեկավարող օղակ:
3. Կառուցվածքային և իրավական ուղեցույցերի մշակում՝ ՋՕԸ Ֆեդերացիայի ստեղծման և ցուցադրական Ֆեդերացիայի ստեղծման նպատակով:
4. Ոռոգման Ընկերակցության ստեղծման համար նախապայմանների մշակում
5. Ոռոգման Օրենքի նախնական մշակում
6. Ենթաբաղադրիչի Մ և Գ պլանի մշակում՝ գործողությունների վերահսկման նպատակով

**Ակրնկալվող արդյունք**

Նախատեսված կառուցվածքային բարեփոխումների և վերականգնված ֆիզիկական ենթակառուցվածքների կարևորագույն ակրնկալվող արդյունքը կլինի համակարգի շահագործման և պահպանման ֆինանսական կայունության փոխանցումը պետությունից ջրօգտագործողներին: ՀՄՀ ծրագիրը նախատեսում է առանձնահատուկ թիրախներ շահագործման և պահպանման ինքնաֆինանսավորման վերաբերյալ (25%-ով ավելացում 2011թ-ին, այսինքն՝ 46%-ից 2006թ. դրությամբ 70% )